ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

Целью данного исследования является выявление новых факторов риска, основанных на эмпирических данных Республики Армения.

QNARIK AYVAZYAN
GAYANE BARSEGHYAN

THE IDENTIFICATION OF RISK FACTORS UNDERLYING THE CALCULATION OF CAR INSURANCE PAYMENTS IN ARMENIA

Key words: *compulsory motor-car third party liability insurance, logit regression, risk factors, probability of car accident*

In 2010 compulsory motor-car third party liability insurance system was established in Armenia. For this purposes it is very important for insurance companies to be able to differ the risky drivers from not risky ones by providing fair risk based pricing for them.

This research aims to estimate and assess all possible risk factors causing occurrence of car accident in the Republic of Armenia.

ԱՐԹՈՒՐ ԱՅՐՈՒՄՅԱՆ
Ասպիրանտ, ՀՊՏՀ

ԴՈԼԱՐԱՅՆԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ 2014–2017 ԹԹ.

Հիմնաբառեր. *դոլարայնացում, ակտիվների փոխարինում, արժույթի փոխարինում, ֆինանսական համակարգի դոլարայնացում, մակրոմիջավայրի անկայունություն, իրական հատված, ֆինանսական հատված*

Տարբեր երկրներում տնտեսության անցումային փուլում ազգային արժույթի նկատմամբ անվստահությունը և մակրոմիջավայրի անկայունությունը դրդում են տնտեսական սուբյեկտներին ազգային արժույթը փոխարինելու այլ երկրների ավելի վստահելի արժույթով: Անցումային փուլում ՀՀ տնտեսությունը ևս զերծ չմնաց դոլարայնացումից, այն արմատավորվեց և խորացավ ինչպես իրական, այնպես էլ ֆինանսական հատվածում: Փորձել եմ բացահայտել, թե ինչ գործոններով է պայմանավորված դոլարայնացումը և ինչպես է փոխվել վերջինիս շարժընթացը 2014–2017 թվականներին:

Դոլարայնացումը, ազգային արժույթին զուգահեռ, արտարժույթի լայնորեն կիրառումն է երկրի ներսում՝ որպես արժեքի չափման միավոր, շրջանառության միջոց, խնայողության միջոց և այլն: Հայաստանում դոլարայնացումն արմատավորվել է դեռևս 1993 թ.՝

ազգային արժույթի ներդրմանը զուգահեռ, գերգնաճի, արժեզրկման և դրամի նկատմամբ մարդկանց անվստահության պայմաններում: Առաջին հերթին, դոլարայնացումն արմատավորվել է իրական, իսկ ավելի ուշ՝ 1996–1999 թթ., բանկային համակարգի նկատմամբ վստահության վերականգնման պայմաններում, դա խորացել է ֆինանսական հատվածում:

Տնտեսության դոլարայնացման գործընթացում կարելի է առանձնացնել երեք փուլ (թեև որոշ մասնագետներ հաշվի են առնում նաև պարտավորությունների դոլարայնացումը).

1) ակտիվների փոխարինում (asset substitution),
2) արժույթի փոխարինում (currency substitution),
3) ֆինանսական համակարգի դոլարայնացում:

Ակտիվների փոխարինումը տեղական բանկերում արտարժութային ավանդների տեսակարար կշռի մեծացման երևույթն է: Այն ընդունված է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$Ակ_{Փ}=ԱԱ/(ՑԱ+ ԺԱ+ ԱԱ),$$

որտեղ ԱկՓ-ն ակտիվների փոխարինման ինդեքսն է,

ԱԱ-ը տեղական բանկերում արտարժութային ավանդների մեծությունն է,

ՑԱ-ն և ԺԱ-ն համապատասխանաբար՝ ազգային արժույթով ցպահանջ և ժամկետային ավանդները:

Արժույթի փոխարինման դեպքում ազգային արժույթից արտարժույթին են անցնում արժեքի չափի և շրջանառության միջոցի ֆունկցիաները:

Դոլարայնացման մակարդակի չափման համար ընդունված է օգտագործել դոլարայնացման ինդեքսի հետևյալ բանաձևը.

$$Դ = (ՇԿԱ+ԱԱ)/(ՓՋ+ՇԿԱ):$$

Դիտարկենք, թե ինչպիսի շարժընթաց է ունեցել դոլարայնացման մակարդակը ՀՀ-ում վերջին տարներին:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2015 թ. դոլարայնացման մակարդակը 2014 թ. համեմատ սկսեց աճել, ինչը պայմանավորված էր դրամի արժեզրկմամբ, հետևաբար՝ բնակչության շրջանում դրա նկատմամբ վստահության անկմամբ: Վերոնշյալի պատճառը ՌԴ-ից մեզ փոխանցված արտաքին ցնցումն էր, ինչն իր հերթին պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Օբյեկտիվ պատճառներից էր համաշխարհային շուկայում նավթի գների անկումը, որն իր հերթին կապված էր այն հանգամանքի հետ, որ միջազգային հանրությունը կիրառում էր պատժամիջոցներ Ռուսաստանի Դաշնության նկատմամբ (գծապատկեր 2):



	2014 թ. հունիս	2015 թ. հունիս	2016 թ. հունիս	2017 թ. հունիս
D1	46.9	51.7	50.5	47.7
D2	59.9	64	61	57.7
D3	53.6	51.6	55	48.6
D4	69.8	74.1	73.7	68.4
D5	62.4	66.7	66.4	63.3

Գծապատկեր 1. ***Դոլարայնացման մակարդակը ՀՀ-ում 2014–2017 թթ.***[1]



Գծապատկեր 2. ***ՌԴ ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքի և հում նավթի գների շարժընթացը 2013–2016 թթ.***[2]

Ինչպես գիտենք, ՌԴ տնտեսության մեծ մասը հիմնված է վառելիքաէներգետիկ ռեսուրսների արդյունահանման և վաճառքից ստացվող միջոցների վրա: Վերջինս հանգեցրեց ՌԴ ռուբլու արժեզրկմանը ԱՄՆ դոլարի նկատմամբ:

ՌԴ տնտեսական վատթարացումը չէր կարող չազդել ՀՀ տնտեսության վրա այն պարզ պատճառով, որ բազմաթիվ հայեր ապրում և աշխատում են Ռուսաստանի Դաշնու-

[1] D1՝ ռեզիդենտների արտարժութային ավանդների և փողի զանգվածի հարաբերակցություն, D2՝ ռեզիդենտների արտարժութային ավանդների և ընդհանուր ավանդների հարաբերակցություն, D3՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ցպահանջ ավանդների կշիռ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ժամկետային ավանդներում, D4՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ժամկետային ավանդների կշիռ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ժամկետային ավանդներում, D5՝ ռեզիդենտ իրական հատվածին արտարժույթով տրամադրված վարկերի և ռեզիդենտ իրական հատվածին տրամադրված ընդհանուր վարկերի հարաբերակցություն:

[2] Աղբյուրը՝ www.stastista.com

թյունում, աշխատավարձ են ստանում ՌԴ ռուբլով, որի մի մասն ուղարկում են ՀՀ՝ իրենց ընտանիքներին: ՀՀ տնտեսությունն ունի մեծ չափով կախում երկիր ուղարկվող տրանսֆերտներից, որոնց մեծ մասը՝ 2014 թ.՝ 83%-ը, ուղարկվում էր ՌԴ-ից: Այս իրավիճակում 2014 թ. վերջին և 2015 թ. սկզբին նվազեցին ՀՀ ուղարկվող տրանսֆերտները (գծապատկեր 3): ՌԴ ռուբլին նաև արժեզրկվեց ՀՀ դրամի նկատմամբ (գծապատկեր 2), ինչը բերեց դրամային արտահայտությամբ տրանսֆերտների նվազման: Նվազեցին նաև ՀՀ տնտեսություն դոլարային մուտքերը: Սա այն պատճառներից մեկն էր, որն ազդեց ՀՀ դրամի արժեզրկման վրա:

Որպես ՀՀ դրամի արժեզրկման սուբյեկտիվ պատճառ՝ նշենք բնակչության շրջանում խուճապային տրամադրությունները: Բնակչությունը, անկախ տարիքից և սեռից, կատարում էր դրամի անհարկի փոխակերպումներ հիմնականում ԱՄՆ դոլարի՝ սպեկուլյացիոն նպատակով ապագայում գումար աշխատելու համար: Բնակչության մի մասն իր դրամային ավանդները փոխակերպում էր ԱՄՆ դոլարի կամ ներդնում էր ոսկու մեջ: Բանկերի և փոխանակման կետերի հերթերում կարելի էր տեսնել նույնիսկ թոշակառու տատիկ/պապիկների, ովքեր իրենց թոշակները և վերջին խնայողությունները փոխակերպում էին ԱՄՆ դոլարի:



Գծապատկեր 3. ***ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ոչ առևտրային բնույթի տարեկան փոխանցումներ***[1]

Վերը նշված օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված՝ ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2014 թ. նոյեմբերի սկզբի 410 դրամից դեկտեմբերի 17-ին դարձավ 527 դրամ[2]:

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:
[2] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



Գծապատկեր 4. ***ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի շարժընթացը 03.11.2014–29.12.2014 թթ.*** [1]

Այս ամենը հանգեցրեց դոլարայնացման մակարդակի աճին (գծապատկեր 1): Արժեզրկման տեմպը դանդաղեցնելու և չխորացնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնցից էին արտարժույթի շուկայում բաց ինտերվենցիաները (ԱՄՆ դոլարի վաճառք՝ նախապես հայտարարված առավելագույն սահմանաչափերով), վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումը (6.75%-ից բարձրացնելով մինչև 10.5%), լոմբարդային ռեպո տոկոսադրույքի կտրուկ բարձրացումը (8.25%-ից մինչև 21%):

Այս գործողությունները զսպեցին դրամի կտրուկ արժեզրկումը և բարձր գնաճը: ԿԲ խորհուրդը, սկսած 2015 թ. օգոստոսից, 12 հաջորդական քայլերով իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 10.5%-ից 2017 թ. փետրվարին դարձնելով 6%:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2015 թ. սկսած, դոլարայնացման բոլոր 5 ցուցանիշները բարելավվել են, ինչը վկայում է այն մասին, որ բնակչության շրջանում աճել է ՀՀ դրամի նկատմամբ վստահությունը, խնայողություններում մեծացել է դրամային խնայողությունների տեսակարար կշիռը: Այս ամենը նաև պայմանավորված է ցածր գնաճային միջավայրով, մասնավորապես՝ 2016 թ. դեկտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է –1,1%, այսինքն՝ 2016 թվականին ունեցել ենք գնանկում: Գնանկումային միջավայրը նպաստել է դրամով իրական տոկոսադրույքի աճին, ինչն էլ, իր հերթին, աճ է ապահովել դրամային խնայողություններում:

Եվ վերջում նշենք, որ ապադոլարայնացման քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում անհրաժեշտ է որոշակի զգուշավորություն ցուցաբերել, քանի որ այն կարող է կապիտալի զգալի արտահոսք առաջացնել, ինչպես նաև նպաստել ստվերային տնտեսության մեծացմանը և բանկերի ֆինանսական միջնորդության թուլացմանը:

[1] Գծապատկերը կազմված է ՀՀ ԱՎԾ՝ 2007–2016 թթ. տվյալների հիման վրա:

АРТУР АЙРУМЯН

ПОКАЗАТЕЛИ ДИНАМИКИ ДОЛЛАРИЗАЦИИ В РА 2014–2017 ГГ.

Ключевые слова: *долларизация, замена активов, замена валюты, долларизация финансовова сектора, нестабильность в макроэкономической среде, реальный сектор, финансовый сектор*

В разих стран мира с переходной экономикой, недоверие к национальной валюте и нестабильность в макроэкономической среде настаивают над экономических субъектов заменять нациальную валюту к боле надежной валюте других стран. В переходном этапе экономика Армении и в том случе не избежала от доларизации. Доларизация началось и углубилась в реальном и в финансовом секторе. Я попытался выяснить какие факторы изменили динамику долларизации в 2014–2017 годы.

ARTUR AYRUMYAN

THE DYNAMICS OF THE INDICATORS OF DOLLARIZATION IN THE RA IN 2014–2017

Key words: *dollarization, asset substitution, currency substitution, dollarization of financial sector, macroeconomic instability, real sector, financial sector*

In different countries with economies in transition, lack of confidence in the national currency and variability in the macroeconomic environment insist economic entities to change national currency to other more reliable currency of other countries. In the transition period the Armenian economy also could not escape from dollarization. It began and deepened both in financial and real sectors. I tried to find out what factors have changed the dynamics of dollarization during 2014-2017 periods.

ԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *վարկային համակարգ, ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ մոտեցում, բանկեր, ոչ բանկային վարկային կազմակերպություններ, դասակարգում, մասնագիտացում*

Վարկային համակարգը դիտարկվել է երկու տեսանկյունից՝ ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ: Վերջինիս դեպքում ՀՀ-ում վարկային համակարգի կազմում ճիշտ կլիներ ընդգրկել բանկերը և ոչ բանկային վարկային կազմակերպությունները, որոնք էլ կարող են դասակարգվել ըստ մի շարք հատկանիշների: Ներկայումս դա կատարվում է՝ ելնելով իրակա-